Հաստատում եմ՝ 4 հունիսի 2024 թ.

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի

Գիտական գծով պրոռեկտոր,

փիլիսոփայական գիտությունների դոկտոր,

Ֆիզիկա - մաթեմատիկական գիտությունների թեկնածու,

պրոֆեսոր Ավետիսյան Պարգև Սերգեյի

ԿԱՐԾԻՔ ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Ռուզաննա Էդուարդի Բաղրամյանի՝

Սկզբունքային բանակցությունների լեզվագործաբանական կաղապարը

Հարվարդի բանակցային նախագիծ)» թեմայով

Ժ. 02.07. - «Ռոմանագերմանական լեզուներ»

մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի

գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Բանակցությունները կազմում են յուրաքանչյուր մարդու առօրյայի մասը: Մարդիկ բանակցել են անհիշելի ժամանակներից՝ բախումներից խուսափելու, քաղաքական, տնտեսական, գործարար շահերն առաջ մղելու, իրենց բարեկեցությունը բարելավելու և բազմաթիվ այլ նպատակներով: Մարդկության զարգացմանը զուգընթաց բանակցությունները շարունակաբար վերափոխվել և ընդլայնվել են՝ արդիականացնելով և՛ ձևաչափը, և՛ գործիքակազմը, ենթարկվելով տվյալ ժամանակաշրջանի հրամայականին:

Գրախոսվող թեկնածուական ատենախոսությունը նվիրված է Հարվարդի բանակցային նախագծի շրջանակում մշակված «Սկզբունքային բանակցություններ» մեթոդի լեզվագործաբանական կաղապարի ուսումնասիրությանն ու վերլուծությանը: Ատենախոսությունը նպատակաուղղված է վերհանելու և համապարփակ կերպով վերլուծելու գործարար բանակցային դիսկուրսում կիրառվող լեզվագործաբանական հնարների ներուժը, որի միջոցով բանակցող կողմերը կարողանում են առաջ մղել իրենց շահերը՝ լինելով կոշտ բանակցվող առակայի և մեղմ մասնակիցների նկատմամբ: Վերոգրյալ նպատակին հասնելու համար առաջադրվել են մի շարք խնդիրներ, որոնց լուծմանը ատենախոսը հետևողականորեն անդրադարձել է աշխատանքի վերլուծական մասում՝ իրականացնելով գործարար բանակցային դիսկուրսի լեզվաոճական և գործաբանական համալիր վերլուծություն:

Ընտրված հետազոտության թեմայի արդիականությունը հիմնավորվում է այն հանգամանքով, որ ժամանակից գործարար հանրությանը անհրաժեշտ է բանակցային դիսկուրսի բարելավում՝ նոր աշխարհակարգի պահանջներին համապատասխան: Ատենախոսի կողմից ներկայացված «Սկզբունքային բանակցություններ» մեթոդի արժեքների առաջմղման նպատակով կիրառվող լեզվական հնարները ձևավորում են բանակցային այնպիսի դիսկուրս, որը համապատասխանում է 21-րդ դարի գործարար մարդու բանակցություններ վարելու պահանջներին:

Աշխատանքի գիտական նորույթն այն է, որ առաջին անգամ փորձ է արվում քանակական, որակական, լեզվաոճական մեթոդների կիրառմամբ քննության առնել խոսքային այն հնարները և միջոցները, որոնք ապահովում են սկզբունքային բանակցությունների արժեքների առկայացումը: Որոշարկվում է ԲՀԼԱ-ի կարևորությունը՝ որպես այլընտրանք բանակցվող տարբերակին և ուսումնասիրվում են վերջինիս արդյունավետ կիրառման համար օգտագործվող լեզվական միջոցները:

Աշխատանքն ունի տեսական և գործնական կարևոր արժեք: Հետազոտության տվյալները և արդյունքները կնպաստեն գործարար հանրույթի բանակցային դիսկուրսի

բարելավմանը, ինչպես նաև լեզվաբանության ոլորտում համապատասխան խնդիրների լուծմանը և առնչվող ոլորտների զարգացմանը:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, 2 հիմնական գլխից, որոնք բաժանվում են ենթագլուխների, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Ներածություն» բաժնում հիմնավոր ձևով ներկայացնում թեմայի արդիականությունը, մեթոդաբանական հիմքը, տեսական և գործնական արժեքը, ինչպես նաև գիտական նորույթը:

Առաջին գլուխը՝ «Գործարար բանակցությունների հիմնարար հասկացությունները. պատմություն և զարգացում», բաղկացած է 3 ենթագլխից: Առաջին ենթագլուխը (Գործարար բանակցությունները՝ որպես սահմանակարգային դիսկուրսի ձևաչափ) հանգամանորեն քննության է առնում սահմանակարգային դիսկուրսի գործարար-բանակցային ձևաչափը, անդրադառնում է վերջինիս առնչվող տարբեր տեսություններին և մոտեցումներին: Երկրորդ ենթագլխում (Սկզբունքային բանակցությունների առանձնահատկությունները և կիրառման արդյունավետությունը) ատենախոսը ներկայացնում է բանակցությունների տեսակները, ռազմավարությունները, և 20-րդ դարում բանակցային ոլորտում առկա այն մարտահրավերները, որոնք նպաստեցին «Սկզբունքային բանակցություններ» մեթոդի ձևավորմանը: Առկա փաստերի և վերլուծությունների հիման վրա, ատենախոսը հանգում է այն եզրակացության, որ կառուցողական և փոխշահավետ բանակցություններ վարելու համար անհրաժեշտ է գրագետ մշակված դիսկուրս, որտեղ կիրառված յուրաքանչյուր լեզվական և արտալեզվական միջոց օգնում է գտնել փոխընդունելի լուծումներ՝ զերծ մնալով անձնական հակամարտության դրսևորումներից: Հատկանշական է առաջին գլխի երրորդ ենթագլուխը, (Մտավոր կաղապարները որպես սկզբունքային բանակցությունների արժեքների առկայացման կարևորագույն գործոն) որտեղ ատենախոսն անդրադառնում է մտավոր կաղապարներին ու գաղափարախոսությանը և վերլուծում վերջիններս առկայացնող բանակցային դիսկուրսը՝ սկզբունքային բանակցությունների արժեքներն առաջ մղելու տեսանկյունից:

Երկրորդ գլուխը՝ «Սկզբունքային բանակցությունների լեզվագործաբանական կաղապարի ձևավորումը», բաղկացած է 3 ենթագլխից, որտեղ ատենախոսն իրականացնում է սկզբունքային բանակցությունների դիսկուրսի մանրակրկիտ գործնական վերլուծություն: Առաջին ենթագլխում (Խոսքային ակտերի դերը՝ սկզբունքային բանակցությունների գործընթացում) կատարվում է խոսքային ակտերի քանակական վերլուծություն, որի արդյունքները փաստում են անուղղակի խոսքային ակտերի գերակայությունը սկզբունքային բանակցություններում: Արժեքավոր է երկրորդ ենթագլխում (Հեջավորման ռազմավարությունների դերը սկզբունքային բանակցությունների գործընթացում) ներկայացրած հեջային ռազամավարությունների դասակարգումն ու վերլուծությունը: Հեջերի և հեջային ռազմավարությունների դասակարգումը վերարժևորում են հեջերի՝ որպես լեզվական միջոցի կիրառման կենսական անհրաժեշտությունը բանակցային գործընթացում՝ միևնույն ժամանակ խթանելով և զարգացնելով վերջիններիս ուսումնասիրությունը լեզվական տիրույթում:

Երրորդ ենթագլխում (Լեզվառճական հնարների դերը սկզբունքային բանակցություններում) առանձնակի շեշտվում և քննվում են համոզման խոսքը ձևավորող լեզվառճական որոշակի հնարներ, որոնք նպատակաուղղված են սկզբունքային բանակցությունների արժեքների առկայացմանը:

Հետազոտության հիմնական եզրահանգումները ամփոփ ներկայացված են Եզրակացություն» բաժնում:

Այսպիսով կարելի է փաստել, որ Ռուզաննա Բաղրամյանը լուծել է իր առջև դրված խնդիրները: Ատենախոսությունը գրված է պատշաճ գիտական հայերենով:

Վերոգրյալի հետ մեկտեղ պետք է արձանագրել, որ աշխատանքում առկա են որոշակի նկատառումներ և դիտողություններ:

1. Արդյո՞ք Հարվարդի բանակցային նախագիծը կիրառելի է բոլոր տեսակի բանակցությունների համար:

2. Հեղինակը պնդում է, որ անհրաժեշտ է տարանջատել բանակցության մասնակցին բուն խնդրից. բայց չէ՞ որ ըստ լեզվագործաբանության մասնակիցը հաղորդակցական իրավիճակի կարևորագույն տարրերից է.
3. Բանակցությունները հաճախ տեղի են ունենում այնպիսի իրավիճակներում, որտեղ առկա են ուժային տարբերություններ, և դրանց լուծումը հիմնականում հանգուցալուծվում է ի օգուտ ուժեղի և այսպիսով չափազանց դժվար է հասնել արդար և անկողմնակալ համաձայնության:
4. Հեղինակը «I think» նախադասությունը համարում է հեջ: Սովորաբար այն արտահայտում է հեղինակի հստակ կարծիք:
5. Հեղինակը դիտարկում է մտավոր կաղապարները որպես առկայացման կարևորագույն գործոն: Կուզենայի, որ հեղինակը հստակեցներ, թե որ մտավոր կաղապարներն են համարվում առավել կարևոր սկզբունքային բանակցություններ վարելիս:

Ամփոփելով նկատառումները, հարկ է նշել, որ վերոնշված նկատառումներն ունեն մասնակի և խորհրդատվական բնույթ և բնավ չեն կարող ազդել Ռուզաննա Էդուարդի Բաղրամյանի գիտական աշխատանքի ընդհանուր դրական արժանիքների վրա: Ատենախոսությունը և սեղմագիրը պատրաստված են ներկայացվող պահանջներին համապատասխան, իսկ հեղինակի կողմից հրատարակված հոդվածներում լիարժեքորեն արտացոլվում են ատենախոսության հիմնական դրույթները:

Վերոնշվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Ռուզաննա Էդուարդի Բաղրամյանի Սկզբունքային բանակցությունների· լեզվագործաբանական կաղապարը (Հարվարդի բանակցային նախագիծ)» վերտառությամբ ատենախոսությունը լիովին համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգով սահմանված պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Ժ.02.07 «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Ատենախոսության քննարկմանը ներկա էին Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի լեզվի տեսության և միջմշակութային հաղորդակցության ամբիոնի հետևյալ անդամները՝ բ.գ.դ., պրոֆեսոր Կ. Մատինյանը, մ.գ.դ., պրոֆեսոր Ի. Կարապետյանը, բ.գ.դ., պրոֆեսոր Ա. Սիմոնյանը, բ.գ.դ., դոցենտ Մ. Սարինյանը, բ.գ.թ., դոցենտ Ն. Թովմասյանը, բ.գ.թ., դոցենտ Ս. Թումանյանը և ուրիշներ:

Առաջատար կազմակերպություն՝
Հայ - Ռուսական (Սլավոնական)
համալսարանի լեզվի տեսության և
միջմշակութային հաղորդակցության
ամբիոնի վարիչ,
բ.գ.դ., պրոֆեսոր՝ Ա. Ա. Սիմոնյան

Հաստատում եմ՝ 4 հունիսի 2024թ.

Հայ - Ռուսական (Սլավոնական)
համալսարանի գիտական քարտուղար, բ.գ.թ. Ռ. Ս. Կասաբաբովա